«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀՈԲԵԼՅԱՆԴ, «ՎՐԱՍՏԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

որ «Վրաստանը» իր մեկդարյա գոյության ընթացքում նշանակալի դեր կատարեց ինչպես վրաց պետականության, Վրաստան-Հայաստան հարաբերությունների ամրացման եւ վրաց ու հայ ժողովուրդների բարեկամության խորացման գործում: «Վրաստանը» իր ընթերցողների մեջ սերմանում է սեր, հարգանք եւ հավատարմություն հարազատ երկրի՝ Վրաստանի նկատմամբ, ինչով է՛լ ավելի նպաստում պատմականորեն ազգակից եւ եղբայր երկու ազգերի բարեկամությանն ու համագործակցությանը:

Անցած հարյուր տարիների ընթացքում եւ այսօր էլ «Վրաստանը» երկրի ազգությամբ հայ բնակիչների մոտ հարգանքի զգացում է առաջացնում վրացական պետության, վրաց ժողովրդի հանդեպ՝ աջակցելով նրա ինտեգրմանը վրաց հասարակությանը:

Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունն արդեն հինգ տարի է, հաջողությամբ համագործակցում է «Վրաստան» թերթի հետ եւ այդ տարիների ընթացքում Վրաստանում բնակվող հայազգի քաղաքացիներին ապահովում նաեւ հարկային եւ մաքսային պարտավորությունների մասին տեղեկատվությամբ:

Ցանկանում եմ իմ երախտիքը հայտնել թերթի խմբագրակազմին, վրաց-հայկական հարաբերությունների ամրացման եւ մեր երկրում խաղաղության ու կայունության հաստատման գործում:

Շնորհավորում եմ, սիրելի «վրաստանցիներ»...

ԼԵՎԱՆ ԿԱԿԱՎԱ

Վրաստանի ֆինանսների նախարարի տեղակալ, եկամուտների ծառայության պետ

ՎՐԱՍՏԱՆՆ ՈՒ ՀԱՅԱԽՈՍ «ՎՐԱՍՏԱՆԸ» ՀԱՐԱՋԱՏ ԵՆ ԻՆՁ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ես ոչ միայն ինձ զգացել եմ Վրաստանի մեջ, այլեւ շարունակ Վրաստանն եմ զգացել իմ մեջ, եւ դա ուրախություն է եղել, Աստծո տված ուրախություն:

Ահավասիկ, որպես դարավոր բարեկամության մի նոր վկայություն, 1920-ի դեկտեմբերին Թբիլիսիում սկսում է հայերեն լույս տեսնել «Վրաստան» թերթը: Ընդլայնելով մեր ժողովուրդների հոգեւոր սահմանները, լուսաբանելով նորաստեղծ հանրապետության առջեւ դրված խնդիրները, թերթը միաժամանակ մշակութային յուրովի դաշտ է հանդիսացել մասնավորապես Վրաստանում ծնված, ապրող, ստեղծագործող անհատների համար: Պահի թելադրանքով, հիշողությանս սահմաններում, հիշատակեմ անուններ, որ այս կամ այն կերպ կապված են եղել թերթի աշխատանքի հետ. Մկրտիչ Ասլանյան, Մկրտիչ Սարգսյան, Մարտին Քարամյան, Հովհաննես Կարայան, Բենիկ Սեյրանյան, Սոս Սիմավորյան, Անահիտ Բոստանջյան, Աղասի Այվազյան, Հրանտ Աբրահամյան, Գիվի Շահնազար, Օքրո Օքրոյան, Ժորա Սնխչյան, Վիկտոր Հովսեփյան, Մռազ Ջաֆարով, Գուրի Եթեր, Նորայր Երթեւցյան, Սերգեյ Առաքելյան, Ալբերտ Օհանյան, Մամիկոն Թագվորյան, Մոլիկ Սեդրակյան, Սամվել Պողոսյան, Գայանե Խաչատրյան (նկարչուհի), Հակոբ Քթոյան, Ալիկ Իսոյան, Միքայել Ախտյան, Հենրիկ Սահակյան, Արտո Ալեքսանյան, Աղասի Մելքոնյան... Անունների ցանկը կարելի է շարունակել: Անշուշտ, ասող կլինի՝ ի՞նչ կարիք կա: Իսկ ես ասում եմ՝ կարիք կա, որովհետեւ, երեք թե չորս հոգուց բացի, մյուսներն ավարտել են երկրային կյանքը: Գրքերի հեղինակներ էլ կան, որ մնում են գրականության պատմության մեջ: Կան նաեւ գրական նշանավոր գործիչներ, սակայն, շատերի շիրմաքարերին իջել է մոռացության փոշին: Ցանկացա մաքրել մարդկային մտքի ժանգը եւ պարզել, վերստին կյանքի կոչել, ապրեցնել գոնե մի պահ: Ոչ միայն ճանաչել, այլեւ ճանապարհ եմ գնացել, հացի սեղան եմ նստել նրանցից շատերի հետ:

Ինձ համար այդ մեկը «Վրաստան» թերթի խմբագիր (1959-1986թթ.) Հակոբ Բլրոյանն եղավ: Հոր աչքով էր նայում, ինչպես ասում են, հայրախնամ էր: Ինձ ընդունում, քաջալերում, տպագրում էր: Թող որ գերեզմանը կնքված մնա եւ երկնքում լույսի մեջ լինի հոգին:

Երբ ժամանակը լցվեց, թերթի գլխավոր խմբագիր նշանակեցին Վան Բայբուրթյանին: Ի դեպ, «Վրաստանի» նախորդ, թվով տասներկու խմբագիրներն էլ կուսակցական աշխատողներ են եղել, այն է՝ ոչ մասնագետներ: Վանը, սակայն, կայացած ժուռնալիստ էր, փորձառու, ստեղծագործական ուղի անցած: Մոսկվայում, ինչպես եւ Թբիլիսիում լույս տեսնող պարբերականների սեփական թղթակից էր եղել: Երկու կարծիք լինել չի կարող, Վան Բայբուրթյանով «Վրաստան» (այն ժամանակ «Սովետական Վրաստան») հանրապետական թերթը բնականոն հունի մեջ մտավ: Առաջին իսկ համարները ցնծությամբ ընդունվեցին: Վանը մի առանձին սիրով հիշում է հայրենակից, անվանի մտավորական, գրող, ժուռնալիստ Մերուժան Տեր-Գուլանյանի հիացական նամակը Երեւանից: Ի թիվս այլոց, Վանը բարեկամների շարքի առաջնագծում տեսնում է ՀԳՄ նախկին, նախագահ Վարդգես Պետրոսյանին եւ բանաստեղծ, թարգմանիչ Գագիկ Դավթյանին:

Վան Բայբուրթյանին հաջողվեց խաղաղ մթնոլորտում ստեղծել ստեղծագործական գրեթե կատարյալ կոլեկտիվ: Առաջնություն տվեց մարդկային ազնիվ ու անկեղծ հարաբերություններին:

Իմ գործընկեր Վանը կաբինետային չէ. շարունակ շարժման մեջ է, մեկնում է Վրաստանի հայաբնակ վայրերը, մասնակցում միջոցառումների ու նոր միայն լուսաբանում թերթում: Առանց Վանի մասնակցության ու գործակցության չեն անցնում այնպիսի հանդիսություններ, ինչպիսիք են, ասենք, սայաթ-նովյան Վարդատոնը Թբիլիսիում, տերյանական օրերը Գանձա գյուղում, Ջիվանու օրը Կարծախում, Հավասու օրը Ծալկայի Այազմա գյուղում, աղայանական օրը Բոլնիս-Խաչենում: Այս հանդիսություններն, անշուշտ, գնալով մարում են, կորցնում իրենց նախնական փայլը: Ինչո՞ւ: Որովհետեւ ժամանակները փոխվում են, մարդկային սրտերը կարծրանում են եւ ազգային արժեքների վրա հարձակումներ են գործում եվրոպական արժեք կոչվածները, որ մեծ մասամբ պիղծ են, այլասերող:

Ահա այս ծանր ու ավելի ծանրացող պայմաններում Վան Բայբուրթյանը շարունակում է իր առաքելությունը՝ հավատարիմ մնալով երեսուն տարի առաջ կապած ուխտին:

Գայթակղություններ չունեցավ նյութական հարստություն դիզելու, նախընտրեց հոգու ճանապարհը, նախընտրեց բարի գործերով հարստանալը: Ինչպե՞ս թողնի թերթը, երբ Վրաստանի հայության մեծ մասը պետական օրենքներին, օրենսդրական դաշտում տեղի ունեցող փոփոխություններին ծանոթանում է թերթի միջոցով: Նույնը վերաբերում է հայաստանյան եւ համահայկական ընդհանրական կյանքին:

Առիթ էր, մի քիչ ծավալվեցի: Մնում է մեր եղբորը՝ Վան Բայբուրթյանին, ցանկանալ մարմնավոր եւ հոգեւոր զորացում՝ ի շահ հայ-վրացական հարաբերությունների առավել կայունացման ու զարգացման, մի բան, մի գործ, մի երեւույթ, որ գրեթե նույնանում է Աստծո պատվիրանի հետ. «Սիրիր մերձավորիդ անձիդ պես»:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՆԱԹԱՆ

«Ձայն հայրենական» թերթի գլխավոր խմբագիր

Երեւան

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕԲՅԵԿՏ

ԹԲԻԼԻՍԻԻ ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՆՈՐ ՇԵՆՔԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՏԵՆՈՒՄ Է ԱՎԱՐՏԻՆ

Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի նոր շենքի շինարարությունը մոտենում է ավարտին:

Ինչպես հայտնի է, կորոնավիրուսի համավարակով պայմանավորված սահմանափակումները իրենց ներգործությունն ունեցան երկրի տնտեսական եւ սոցիալական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Շատ բնագավառներ կաթվածահարվեցին, շատ աշխատանքներ դադարեցվեցին:

Ըստ երեւույթին, դրանով էր պայմանավորված այն, որ վերջերս հեռուստաընկերություններից մեկը հեռարձակեց հաղորդում, ուր խոսվեց առանձին օբյեկտների, այդ թվում՝ Թբիլիսիի հայկական թատրոնի շինարարական աշխատանքների իբր դադարեցման մասին: Շտապենք հերքել տարածված ապատեղեկատվությունը: Թատրոնի շինարարությունը համավարակի նույնիսկ ամենածանր ժամանակահատվածում չի դադարել: Միգուցե փոփոխական ինտենսիվությամբ, բայց շինարարությունը երբեք կանգ չի առել:

Առաջին լուսանկարը նորակառույց դահլիճից

Ինչպեսեւ տեղեկացրին «Վրաստան» թերթին շինարարները, աշխատանքներն ընթանում են համաձայն հաստատված ծրագրի, ընդ որում շինարարության գերակշիռ մասն ավարտված է: Ներկա դրությամբ տարվում են ներքին հարդարանքի աշխատանքներ:

- Արտաքին ճակատի աշխատանքները, ինչպես տեսնում եք, գրեթե ավարտվել են, մնացել է միայն երեսապատումը: Այժմ շենքի ներհարդարմամբ ենք զբաղված: Աշխատանքներ են տարվում երկու՝ մեծ ու փոքր դահլիճներում: Իհարկե, համավարակի սահմանափակումները ազդեցին շինարարության տեմպերի վրա, խախտեցին գրաֆիկը, սակայն աշխատանքները երբեք չեն դադարել եւ առ այս պահն ընթանում են:

Հիշեցնենք, որ Թբիլիսիի հայկական թատրոնի նոր շենքի շինարարությունը, որը սկսվեց 2019 թվականի հունվարին, իրականացվում է Բիձինա Իվանիշվիլու «Քարթու» հիմնադրամի տրամադրած շուրջ 19 միլիոն լարիի ֆինանսավորմամբ:

«ՎՐԱՍՏԱՆ»

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՍԿՍՈՒՄ Է ՏԵՂՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

Պետական սպասարկումների զարգացման գործակալությունը հունիսի 8-ից վերսկսում է տեղում ծառայությունների մատուցումը:

Սպասարկումների զարգացման գործակալության հրապարակած տեղեկության մեջ նշված է, որ այն անձինք, ովքեր առանց տարածքը լքելու ցանկանում են օգտվել Պետական սպասարկումների զարգացման գործակալության ծառայություններից, օրինակ՝ Վրաստանի քաղաքացու կենսաչափական անձնագիր, էլեկտրոնային ID/բնակության էլեկտրոնային վկայական, PIN/PUK կոդերի վերականգնում, կարող են Պետական սպասարկումների զարգացման գործակալության sda.gov.ge կայք-էջում լրացնել էլեկտրոնային դիմում՝ տեղում սպասարկում ստանալու համար:

«Շահագրգիռ անձի կողմից ծառայության արժեքի վճարումից հետո, գործակալության աշխատակիցը ծառայության ընթացակարգերն իրականացնելու համար կայցելի շահագրգիռ անձին՝ նրա կողմից նշված հասցեով, համավարակով պայմանավորված կանոնների պահպանմամբ:

70 եւ ավելի բարձր տարիքի մարդկանց, ինչպես նաեւ նրանց, ովքեր առողջական վիճակի պատճառով չեն կարողանում տեղաշարժվել, ID/բնակության էլեկտրոնային վկայական եւ կենսաչափական անձնագիրն առաջին անգամ ստանալու համար գործում է այլ կանոն՝ այս կատեգորիայի անձանց համար նշված ծառայությունն անվճար է: Տեղում ծառայություն ստանալու համար շահագրգիռ անձը պետք է կապվի գործակալության հեռակա սպասարկման ծառայության հետ՝ 2 40 10 10 հեռախոսահամարով եւ համապատասխան տեղեկություն տրամադրի օպերատորին, որից հետո, գործակալության աշխատակիցները, Առողջապահության համաշխարհային կազմակերպության կանոններին համապատասխան, հայտն ստանալու եւ անհրաժեշտ ընթացակարգերն իրականացնելու համար 10 օրվա ընթացքում կայցելեն նշված հասցեով»,- ասված է սպասարկումների զարգացման գործակալության հայտարարության մեջ:

COVID - 19

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԿՄՇԱԿՎԻ ԻՆՏԵՆՍԻՎ ԵՎ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾՐԱԳԻՐ»

Հունիսի 8-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու գլխավորությամբ, անցկացվեց միջգերատեսչական համակարգող խորհրդի նիստ, որտեղ քննարկվեց երկրում առկա համավարակային իրավիճակը:

Վարչապետի գնահատմամբ՝ երկրում վարակի տարածման հետ կապված իրավիճակը կայունանում է: Ինչ վերաբերում է պատվաստումներին, ապա, նրա խոսքով, մինչեւ տարեվերջ երկիրը կունենա 3,6 մլն չափաբաժին պատվաստանյութ, ինչը նշանակում է, որ համընդհանուր պատվաստման համար ռեսուրս կլինի: Վարչապետի հանձնարարությամբ, առողջապահության նախարարությունը մեկ շաբաթվա ընթացքում կմշակի ինտենսիվ պատվաստումների եւ զանգվածային պատվաստումների կենտրոններ կազմակերպելու ծրագիր, որը կներկայացվի համակարգող խորհրդին՝ հաստատման համար: Բացի այդ, Հիվանդությունների վերահսկման եւ հանրային առողջապահության ազգային կենտրոնը կվերապատրաստի պատվաստման լրացուցիչ բրիգադներ, եւ գյուղական բժիշկները ներգրավված կլինեն այս գործընթացին: Բացի այդ, միջգերատեսչական համակարգող խորհրդի որոշման համաձայն, ավիացիայի ոլորտում աշխատող անձինք, որպես առաջնահերթ խումբ, կներգրավվեն պատվաստումների գործընթացի:

Միաժամանակ նշվեց, որ պատվաստման գործընթացին զուգահեռ, պաշտպանիչ դիմակ կրելը, սոցիալական հեռավորություն պահպանելը եւ մարդաշատ հավաքույթներից խուսափելը մնում են վարակի տարածումը կանխելու կարեւորագույն միջոցներ: Միջգերատեսչական համակարգող խորհուրդը քաղաքացիներին կոչ է անում պահպանել գործող կանոնակարգերը՝ սահմանափակումների մեղմացման ֆոնին համավարակային իրավիճակի կայունացման միտումը պահպանելու համար:

ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂՐԵԼԻՋԵ. «ԱՄԵՆԱՅՆ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ, ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԼԻՆԻ ԿԱՏԱՐԵԼ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ԵՐՐՈՐԴ ՉԱՓԱԲԱԺԻՆԸ»

Հունիսի 9-ին, միջգերատեսչական համակարգող խորհրդի հերթական նիստի ավարտից հետո, Վրաստանի հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեն հայտարարեց, որ, ամենայն հավանականությամբ, անհրաժեշտ կլինի կատարել կորոնավիրուսի պատվաստանյութի երրորդ չափաբաժինը:

Նրա խոսքով, աշխարհում պատվաստանյութի երրորդ չափաբաժնի վերաբերյալ շատ հետազոտություններ են արվում, եւ մասնագետները խոսում են դրա անհրաժեշտության մասին: Ամիրան Գամղրելիձեի հավաստմամբ, երրորդ դեղաչափով պատվաստումն անհրաժեշտ կլինի երկրորդ դեղաչափից 6-8 ամիս անց:

- Շատ հետազոտություններ են արվում առավել ուժեղ դեղաչափերի վերաբերյալ: Ամենայն հավանականությամբ, անհրաժեշտ կլինի երրորդ՝ դոզան: Մարդիկ, ովքեր երկու անգամ պատվաստվել են, այժմ հետազոտվում են, պարզելու համար, թե որքան ժամանակ կպահպանեն նրանք իրենց բջջային իմունիտետը, եւ այս դիտարկումներին զուգահեռ, շատերը կարծում են, որ պատվաստանյութերի մեծամասնության համար անհրաժեշտ կլինի երրորդ չափաբաժինը: Միգուցե մեզ նույնպես պետք լինի երրորդ դոզան՝ երկրում ավելի ուժեղ իմունիտետ ստեղծելու համար,- ասել է Ամիրան Գամղրելիձեն եւ հավելել, որ քաղաքացիները կարող են երրորդ անգամ պատվաստվել այլ պատվաստանյութով:

- Ինչ վերաբերում է նրան, թե կոնկրետ ինչ պատվաստանյութ պետք է օգտագործվի երրորդ դեղաչափի համար, ապա հնարավոր է, լինի նաեւ այլ: Նրանք, ովքեր «Sinopharm»-ով երկու անգամ պատվաստվել են, 8 ամիս անց կարող են պատվաստվել «Pfizer»-ով կամ «Astrazeneca»-ով եւ՝ հակառակը:

Ինչ վերաբերում է առաջին եւ երկրորդ դեղաչափերը խառնելուն, այս փուլում խորհուրդ է տրվում, որ առաջին եւ երկրորդ դեղաչափերը կատարվեն նույն արտադրողի պատվաստանյութերով, բայց մասնագետները խառնելու մեջ մեծ խնդիր չեն տեսնում: Օրինակ, «Astrazeneca»-ի երկրորդ դեղաչափը կատարվում է 8-12 շաբաթ անց, եւ եթե դուք շտապում եք կատարել երկրորդ չափաբաժինը, կարող եք կատարել եւս այլ պատվաստանյութ, ես դրանում մեծ խնդիր չեմ տեսնում, բայց այս դեպքը պետք է քննարկել: «Նիտագը» պատվաստումների գիտական կոմիտե է, եւ հարցը նրանց հետ պետք է անհատապես համաձայնեցվի: Եթե մարդը ցանկանում է պատվաստվել պատվաստանյութ արտադրողի երկրորդ չափաբաժնով, պետք է դիմում ուղարկի նախարարություն, որից հետո, կոմիտեն կքննարկի այն,- ասել է Գամղրելիձեն:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 175 ՄԻԼԻՈՆԸ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում անցել է 175 625 988-ից: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 3 788 966-ը: Ապաքինվել է 159 միլիոն 182 հազար 361 մարդ:

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ կա հաստատված **34 275 783** դեպք: Այստեղ մահացածների թիվը **614 007** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **29 274 823**-ի, մահացածներինը՝ **363 097**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **17 215 159**, մահացել՝ **482 135** մարդ: **Ֆրանսիայում** կորոնավիրուսով վարակվել է **5 729 967**, վարակի հետեւանքով մահացել՝ **110 270** մարդ: Ֆրանսիային հաջորդում են Թուրքիան, Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Արգենտինան ու Իսպանիան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **223 555**-ի, մահացածներինը՝ **4 482**-ի, ապաքինվածներինը՝ **214 998**-ի:

Ադրբեջանում վարակվածների թիվը կազմում է **334 992** մարդ: Վարակից մահացել է **4 951,** ապաքինվել՝ **327 907** մարդ:

Վրաստանում, վերջին տվյալներով, վարակվել է **352 649,** մահացել՝ **5 012,** ապաքինվել՝ **337 820** մարդ:

*Հունիսի 11-ին կորոնավիրուսով վարակման **695** նոր դեպքերից **389-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 47, Իմերեթիում՝ 55, Քվեմո Քարթլիում՝ 64, Շիդա Քարթլիում՝ 26, Գուրիայում՝ 7, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 46, Կախեթիում՝ 32, Մցխեթա-Մթիանեթիում՝ 9, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 2, Սամցխե-Ջավախեթիում՝ 18:***

Covid-19-Ի ԴԵՄ ԱՐԴԵՆ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ Է ԱՎԵԼԻ ՔԱՆ 184 ՀԱԶԱՐ ՄԱՐԴ

ԻՍԿ 50 ՀԱԶԱՐԸ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ Է ԵՐԿՐՈՐԴ ԴԵՂԱՉԱՓՈՎ

Հունիսի 9-ի դրությամբ, Վրաստանում կորոնավիրուսի դեմ, ընդհանուր առմամբ, պատվաստվել է 184 718 մարդ: Լրիվ պատվաստման կուրսն անցել է 54 474 քաղաքացի:

Վրաստանի առողջապահության փոխնախարար Թամար Գաբունիայի խոսքով, պատվաստման ծրագիրն ակտիվ ընթանում է ինչպես խոցելի խմբերում, այնպես էլ՝ քաղաքացիների շրջանում:

- Պատվաստումն իրականացվում է «Sinopharm»-ի երկրորդ եւ «Sinovac»-ի առաջին դեղաչափերով: Բացի այդ, մի քանի օրից նախատեսվում է սկսել «Sinovac» պատվաստանյութի երկրորդ դեղաչափի գրանցումը: Ընդհանուր առմամբ, ավելի քան 50 000 քաղաքացի արդեն պատվաստվել է երկու դեղաչափերով, իսկ մոտ 130 000 մարդ՝ մեկ դեղաչափով: Ծրագիրն, իհարկե, կշարունակվի նույն կերպ, ինչպես հիմա է ընթանում,- հայտարարել է Թամար Գաբունիան եւ հավելել, որ պատվաստումների ծրագրին կարող են մասնակցել 18 տարին լրացած բոլոր քաղաքացիները, եւ այդպես էլ կշարունակվի:

Նրա խոսքով, COVID-19–ով երկրում վարակված մարդկանց ընդհանուր թվից հիվանդանոցներում են գտնվում 3 333-ը, վերակենդանացման բաժանմունքում բուժումը շարունակում է 201 մարդ, իսկ ինտենսիվ թերապիայի բաժանմունքում՝ 731 բուժառու:

Հիշեցնենք, որ Վրաստանում պատվաստման գործընթացը մեկնարկեց մարտի 15-ից՝ միայն բժշկական ոլորտի աշխատողների համար: Ավելի ուշ պատվաստվողների խումբն ընդլայնվեց եւ պատվաստվել սկսեցին նաեւ 65 տարեկանից բարձր քաղաքացիները: Այժմ «AstraZeneca» տեսակի պատվաստանյութով պատվաստվելու համար կարող են գրանցվել 45 տարեկանից բարձր քաղաքացիները:

18 տարեկանից բարձր քաղաքացիների պատվաստումն ընթանում է չինական «Sinopharm» տեսակի պատվաստանյութով: Մայիսի 24-ից 18 տարեկանից բարձր քաղաքացիները պատվաստվում են «Sinovac» տեսակի պատվաստանյութով:

Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

ԻՄ ԲԱՐԻ ԲԱՐԵԿԱՄ, ՀՈՒՄՈՐՈՎ ԼԻ ՌԵԶՈ ԳԱԲՐԻԱԶԵՆ

Ցավալի լուր: 84 տարեկան հասակում վախճանվեց աշխարհահռչակ վրաց նկարիչ, կինոյի եւ թատրոնի ռեժիսոր, դրամատուրգ եւ կինոսցենարիստ, տիկնիկագործ Ռեւազ Գաբրիաձեն:

Ռեւազը գրել է շուրջ 35 ֆիլմերի սցենար: Այդ կինոնկարները՝ «Արտասովոր ցուցահանդես», «Սերենադա», «Մի' տրտմիր», «Կարասը», «Տարօրինակները», «Միմինո», «Պասպորտը» (Անձնագիրը) եւ մյուսները կազմում են վրացական կինոդրամատուրգիայի Ոսկե ֆոնդը եւ արժանացել են կինոյի եւ թատրոնի մի քանի տասնյակ միջազգային հեղինակավոր փառատոների դափնեկրի կոչման:

Դեռեւս 1981 թվականին Ռեւազ Գաբրիաձեն Թբիլիսիում հիմնեց խամաճիկային թատրոն, որը մասնակցություն ունեցավ ֆրանսիական Ավինյոնում, շոտլանդական էդինբուրգում, ամերիկյան Նյու Յորքում, կանադական Տորոնտոյում, սերբական Բելգրադում, Մոսկվայում եւ այլ քաղաքներում կայացած թատերական փառատոներին: 2010 թվականին Գաբրիաձեի նախաձեռնությամբ եւ անմիջական մասնակցությամբ Թբիլիսիում խամաճիկային թատրոնի հարեւանությամբ կառուցվեց բացառիկ ժամացույցով աշտարակ, որը երեսապատվել էր նկարչի ձեռամբ պատրաստված տիկնիկներով:

Ռեզո Գաբրիաձեի հետ մեր բարեկամությունը սկսվեց իմ ուսանողության տարիներին, երբ նա Քութայիսիից տեղափոխվեց մայրաքաղաք, իսկ ես՝ Թբիլիսիի պետհամալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանող, նրա հետ աշխատում էի «Մոլոդյոժ Գրուզիի» թերթի խմբագրությունում: Մեր մտերմությունը շարունակվեց նաեւ, երբ Ռեզոն տեղափոխվեց Մոսկվա եւ «Սերգեյ Օբրազցովի տիկնիկային թատրոնի» ղեկավարն էր, իսկ ես աշխատում էի «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթում եւ АПН-ում (Նորությունների Մամուլի Գործակալություն):

Ռեզոն ինձ միշտ ասում էր ու համոզում. «Իմացի'ր եղբայրս, աշխարհի ամենաուժեղ հումորի տերերը քութայիսցիներն ու լենինականցիներն են, Օդեսան ու բուլղարական Գաբրովը, մեզ հետ համեմատ, զրո են»:

Վերջին 10 տարիներին նա վերադարձել եւ բնակվում էր Թբիլիսիում՝ մեր քաղաքի կարեւոր գույներից մեկը լինելով ու սիրելով նրա բացառիկ բազմազգությունը: Ի դեպ, ինձ հետ միասին Ռեզո Գաբրիաձեն շատ անգամ մասնակցել է նաեւ հայկական Սուրբ Գեւորգ եկեղեցում կազմակերպված Սուրբ Ծննդյան տոներին:

ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՈՂՄԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 10-ին, Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ տարածաշրջանային այցով Հարավային Կովկասում գտնվող Ամերիկայի Միացյալ Նահանգների՝ Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով պետքարտուղարի տեղակալի պաշտոնակատար Ֆիլիպ Ռիքերի եւ նրա գլխավորած պատվիրակության հետ:

Հանդիպմանը Հայաստանի վարչապետի պաշտոնակատարը գնահատանքի խոսքեր հայտնեց Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու եւ դատապարտելու վերաբերյալ ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի ուղերձի կապակցությամբ, եւ հույս հայտնեց, որ այն կնպաստի տարածաշրջանում կայունության ու անվտանգության պահպանմանը: Իր հերթին, Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով պետքարտուղարի տեղակալի պաշտոնակատարը նշեց, որ առաջին անգամ է այցելում Հայաստան եւ ուրախ է գտնվել Երեւանում, հայ գործընկերների հետ քննարկել երկկողմ հարաբերությունները: Ֆիլիպ Ռիքերը Նիկոլ Փաշինյանին փոխանցեց ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի ողջույնները եւ վերահաստատեց Հայաստանի հետ գործընկերային հարաբերությունների զարգացման պատրաստակամությունը:

Զրուցակիցներն անդրադարձան տարածաշրջանում տիրող իրավիճակին: Երկուստեք նշվեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության դերակատարության կարեւորությունը եւ լարվածության թուլացման համար քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը:

Նիկոլ Փաշինյանը զրուցակցի ուշադրությունը հրավիրեց գերիների, պատանդների եւ պահվող այլ անձանց շուտափույթ վերադարձի եւ ՀՀ ինքնիշխան տարածքից ադրբեջանական զինված միավորների անհապաղ դուրսբերման անհրաժեշտության վրա:

Կողմերը քննարկեցին նաեւ երկկողմ համագործակցության օրակարգի հարցեր:

Երեւանում, տարածաշրջանային այցի շրջանակներում, ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով տեղակալի պաշտոնակատար Ֆիլիպ Ռիքերը հարգանքի տուրք մատուցեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին՝ ԱՄՆ ժողովրդի անունից ծաղկեպսակ դնելով Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՎԵՐՋԻՆ 30 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐՆ ՈՒ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Հունիսի 9-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ցուցակը գլխավորող, ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը Գյումրիում հանրահավաքի ժամանակ ներկայացրեց, թե իր իշխանության օրոք, վերջին 30 տարում առաջին անգամ, ինչ ծրագրեր եւ բարեփոխումներ են իրականացվել:

- Մենք գնացել ենք այն տեղեր, ում ձայնը լսելի չի եղել, պաշտպանել ենք նրանց, ովքեր անպաշտպան են եղել, մենք հարգել ենք նրանց, ում քամահրանքով են վերաբերվել, խոնարհվել ենք նրանց առաջ, ում վերեւից են նայել,- ընդգծեց Նիկոլ Փաշինյանը:

Հայաստանի վարչապետի պաշտոնակատարի խոսքով՝ իր գլխավորած կառավարությունը բնակարանով ապահովել է մանկատան այն սաներին, ում տասնյակ տարիներով պետությունը խաբել է:

- Բացի այդ, Ադրբեջանից եկած փախստականներին ենք տներով ապահովել՝ նրանց, ում նկատմամբ պետությունը պարտավորություն է ունեցել: Դուք հիշում եք, թե քանի անգամ աղետի գոտու վերացման մասին հայտարարվել է: Մենք եկել ենք եւ միանվագ 3 միլիարդ դրամ ենք հատկացրել այն 277 ընտանիքների բնակարանային կարիքների համար, որոնց նկատմամբ պետությունը իր պարտավորությունը ավելի քան 30 տարի չի կատարել: Մենք կառուցել ենք ճանապարհներ, որոնք 30 տարի չեն կառուցվել կամ նորոգվել,- շեշտեց Նիկոլ Փաշինյանը:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ «ԿՈՆՅԱԿ» ԱՆՎԱՆՈՒՄԸ ԴՈՒՐՍ ԿԳԱ ԿԻՐԱՌՈՒՄԻՑ

ԱՆՎԱՆՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏԿԱՑՆՈՒՄ Է ԵՐԵՔ ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ

Հունիսի 10-ին Հայաստանի կառավարությունը հավանություն տվեց Հայաստան-Եվրամիություն աջակցության համաձայնագրին, որով խթանվելու է «կոնյակ» աշխարհագրական նշումի օգտագործման սահուն դադարեցումը, որի համար Եվրոպան մտադիր է 3 մլն եվրո հատկացնել:

«Կոնյակ» անվամբ ըմպելիքը հայ արտադրողները պետք է դադարեցնեն 2032 թվականից: Դրանից հետո նրանց կտրվի 11 տարի՝ հին պաշարները սպառելու համար: Հայաստանը նշյալ գումարով պետք է նոր բրենդ մշակի հայկական խմիչքի համար, գովազդի ու խթանի դրա տարածումը եւ մրցակցության պահպանումն արտաքին շուկաներում:

«Ծրագրի իրականացմանն ուղղված գործողություններից է հայկական կոնյակի անվանման օգտագործումը դադարեցնելու եւ նոր անվանումը խթանելու համար լիազորված համապատասխան մարմինների համար կարողությունների զարգացումը, գաղափարախոսությունը, պատմության ներկայացումը, անվանումը, կարգախոսը, տարբեր թիրախային շուկաների համար գովազդային արշավի ճանապարհային քարտեզը եւ այլն»,- ասված է որոշման հիմնավորման մեջ:

«Կոնյակ» անվանումից հրաժարվելու պահանջը ներառված է ԵՄ հետ Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրով, որը ստորագրվել է 2017-ին եւ ամբողջությամբ ուժի մեջ մտել 2021 թ. մարտի 1-ից:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ Է

Այս տարվա ապրիլի 26-ից մինչեւ հունիսի 7-ն ընկած ժամանակահատվածում Սեւանա լճի մակարդակը բարձրացել է 18 սանտիմետրով:

Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարության «Հայիդրոմետ» ծառայության տվյալներով, 2021 թվականի հունիսի 7-ի դրությամբ Սեւանա լիճը ծովի մակերեւույթից գտնվել է 1 900 մետր 91 սանտիմետր բարձրության վրա, ինչը 11 սանտիմետրով բարձր է նախորդ տարվա նույն օրվա եւ 18 սանտիմետրով՝ այս տարվա ապրիլի 26-ին գրանցված նիշի համեմատ:

Նույն աղբյուրի տվյալներով, 2021 թվականի հունվարից հունիս ընկած ժամանակահատվածում, Արփա-Սեւան թունելային ջրատարով Սեւանա լիճ է հոսել 114 մլն 450 հազար խորանարդ մետր ջուր, իսկ հունիսի 7-ի դրությամբ Սեւանա լճից ոռոգման նպատակներով բաց թողնված ջրի ծավալը կազմել է 21 մլն 590 հազար խորանարդ մետր ջուր:

ՍԿՍՎԵՑ ԱՐՏԱՇԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 11-ին մեկնարկեց արտահերթ խորհրդարանական ընտրությունների համար էլեկտրոնային եղանակով քվեարկությունը: Այն կավարտվի հունիսի 13-ին:

Քվեարկության արդյունքները կամփոփվեն եւ քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արչանագրությունը կհրապարակվի քվեարկության օրը, այսինքն՝ հունիսի 20-ին:

Էլեկտրոնային եղանակով քվեարկելու իրավունք ունեն Հայաստանի դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողները եւ նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները, նաեւ օտարերկրյա պետություններում երկարատեւ ծառայողական գործուղման կամ ուսման մեջ գտնվող զինծառայողները եւ նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի անդամները: Ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած ցուցակի՝ էլեկտրոնային եղանակով քվեարկելու իրավունք ունի 650 անձ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳ ՓՈԽՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԵՆ ՏՎԵԼ

Հայաստանի բոլոր չորս փոխարտգործնախարարները հրաժարական են տվել: Նրանց հրաժարականի մասին համապատասխան դիմումները նախորդ շաբաթ ուղարկվել էին վարչապետի աշխատակազմ:

Ավելի վաղ, արտգործնախարարի պաշտոնակատար Արա Այվազյանը հրաժարական էր տվել մայիսի 27-ին:

24 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹ ԱՄՆ-ԻՑ

ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի վարչակազմը Հայաստանին 24 միլիոն 5 հազար դոլարի հեպպատերազմյան օգնության փաթեթ է առաջարկում:

Նշենք, որ ԱՄՆ օրենսդիրները մեկ անգամ չէ, որ կոչ են արել Հայաստանին ու Արցախին նվազագույնը՝ 100 միլիոն դոլարի օգնություն հատկացնել:

Բյուջեի առանձին հոդվածով նախատեսվում է 6 հարյուր հազար դոլար հատկացնել Հայաստանի իրավապահ մարմիններին թմրանյութերի տարածման դեմ միջազգային պայքարի համար:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՈՎ ԱՌԱՋԻՆԸ ԱՄՆ-Ն Է

Մարդասիրական օգնության կարգով 2021-ի հունվար-մարտին Հայաստան է ներմուծվել 501.4 տոննա ապրանք, որի արժեքը կազմել է 5 մլն 209.3 հազար դոլար:

2021-ի հունվար-մարտին Հայաստան ներմուծված մարդասիրական օգնությունը, նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ, ավելացել է 8.2 տոկոսով: Ամենաշատ մարդասիրական օգնություն Հայաստանին ուղարկել է Միացյալ Նահանգները՝ 1 մլն 247.4 հազար դոլարի, ինչը, նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ, ավելացել է 90.1 տոկոսով: Հաջորդ ամենամեծ ծավալով մարդասիրական օգնությունը ստացվել է Չինաստանից՝ 1 մլն 109.5 հազար դոլարի (ավելացել է 99 տոկոսով): Երրորդ տեղում Ֆրանսիան է, այստեղից ստացվել է 564.4 հազար դոլարի մարդասիրական օգնություն (ավելացել է 3.1 անգամ):

ՀՈՒՆԻՍԻ ԳՐՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԿԿԱԶՄԻ 3,4 ՏՈԿՈՍ

Համաշխարհային բանկը Հայաստանի տնտեսական աճն այս պահին կանխատեսել է 3.4 տոկոս:

Համաշխարհային բանկի հունիսյան Գլոբալ տնտեսական հեռանկարների մասին զեկույցում նշված է, որ 2022-ին եւ 2023-ին Հայաստանի տնտեսական աճը գնահատվում է, համապատասխանաբար, 4.3 եւ 5.3 տոկոս:

ՍՊՈՐՏ

«VIP-ՍՈՖԻԱ» ՄԱՐԶԱԿՈՒՄԲԸ ԵՐԿՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՎԱՃԵՑ 28 ՏԱՐԲԵՐ ԱՐԺՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԴԱԼՆԵՐ

Թբիլիսիում անցկացվեց փետրագնդակի Վրաստանի առաջնությունը, որին մասնակցեցին, Թբիլիսիից բացի, երկրի 5 տարածաշրջանների մարզիկներ:

Առաջնությունը կազմակերպվել էր Վրաստանի մշակույթի եւ սպորտի նախարարության ու երկրի փետրագնդակի ազգային ֆեդերացիայի կողմից: Մրցաշարն անցկացվեց տարիքային չորս (2000-2008, 2005-2006, 2003-2004 տարիներին ծնվածների եւ մեծահասակների) խմբերում, մենակատարման եւ զուգախմբերի անվանակարգերում:

Երկրի առաջնությունում Թբիլիսին ներկայացնող «VIP-ՍՈՖԻԱ» մարզակումբի (մարզիչ՝ Սոնյա Վարդանյան) մարզիկ-մարզուհիները, ընդհանուր հաշվով, իրենց ակտիվում գրանցեցին 14 ոսկե, 10 արծաթե եւ 4 բրոնզե մեդալներ: Վրաստանի չեմպիոններ դարձան Գրիգոլ Նալգրանյանը եւ Մարիա Խաչատրյանը: Մրցանակային տեղեր զբաղեցրին Պավլե Փիլթոյանը, Մարինա Հովսեփյանը, Գարրի Տեր-Կարապետյանը եւ Դանիել Թադեւոսյանը:

ԵՎՐՈ-2020. ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ԱՆՅԱՅԼ ՏԱՐՎԱՆԻՑ ՀԵՏԱՁԳՎԱԾ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒԵՖԱ-ի 2020 թվականի Եվրոպայի ֆուտբոլի առաջնությունը (Եվրո-2020) նախատեսված է դառնալու ՈՒԵՖԱ-ի Եվրոպայի 16-րդ առաջնությունը, որը կազմակերպվում է Եվրոպական Ֆուտբոլային Ասոցիացիաների Միության (ՈՒԵՖԱ) կողմից:

Մրցաշարը նախատեսվում էր անցկացնել ՈՒԵՖԱ-ի 12 երկրների 12 քաղաքներում՝ 2020 թվականի հունիսի 12-ից մինչեւ հուլիսի 12-ը: Առաջնության գործող չեմպիոնը Պորտուգալիան է, որը հաղթել է 2016 թվականի առաջնությունում: Առաջին անգամ ՈՒԵՖԱ-ի Եվրոպայի առաջնությունում կօգտագործվի մրցավարների վիդեո օգնական (VAR) համակարգը:

2020 թվականի մարտի 17-ին ՈՒԵՖԱ-ն որոշեց մեկ տարով հետաձգել մրցաշարը կորոնավարակի եվրոպական համաճարակի պատճառով:

2017 թվականի դեկտեմբերի 7-ին ՈՒԵՖԱ-ն հայտարարեց՝ բացման վայրը կլինի Հռոմի Օլիմպիական մարզադաշտը: Ընտրված տասնմեկ քաղաքներից եւ երկրներից յոթ քաղաքը եւ վեց երկիրը երբեք չեն ընդունել Եվրոպայի առաջնություն մինչ այդ:

Առաջնության խաղերը կանցկացվեն Լոնդոնում, Գլազգոյում (Մեծ Բրիտանիա), Հռոմում (Իտալիա), Բաքվում (Ադրբեջան), Սանկտ Պետերբուրգում (Ռուսաստան), Մյունխենում (Գերմանիա), Բուդապեշտում (Հունգարիա), Սեւիլյայում (Իսպանիա), Բուխարեստում (Ռումինիա), Ամստերդամում (Հոլանդիա), Կոպենհագենում (Դանիա):

Առաջնությունում 24 թիմերը ընդգրկված են վեց խմբերում.

A խումբ՝ Թուրքիա, Իտալիա, Ուելս, Շվեյցարիա:

B խումբ՝ Դանիա, Ֆինլանդիա, Բելգիա, Ռուսաստան:

C խումբ՝ Նիդերլանդներ, Ուկրաինա, Ավստրիա, Հյուսիսային Մակեդոնիա:

D խումբ՝ Անգլիա, Խորվաթիա, Չեխիա, Շոտլանդիա:

E խումբ. Լեհաստան, Իսպանիա, Շվեդիա, Սլովակիա:

F խումբ՝ Ֆրանսիա, Գերմանիա, Պորտուգալիա, Հունգարիա:

Խմբային մրցաշարի առաջին երկու տեղերը զբաղեցնող թիմերից բացի, առաջնության հաջորդ փուլ են անցնում նաեւ լավագույն արդյունքի հասած եւ երրորդ տեղը զբաղեցրեց 6-ից 4 թիմերը:

ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

ՍԱՄՎԵԼ ՄԿՐՏՉԻ ՓՈՒԹՈՒԼՅԱՆ

Այլեւս մեզ հետ չէ Սամվել Մկրտչի Փութուլյանը, վաստակաշատ մանկավարժն ու հարգված գործընկերը, սրտացավ մարդը:

Ծնվել է 1941 թվականի հոկտեմբերի 28-ին, Բոգդանովկայի շրջանի (այժմ՝ Նինոծմինդա) Խոջաբեկ գյուղում: 1959 թվականին ավարտել է Բոգդանովկայի միջնակարգ դպրոցը եւ նույն տարում ուսումը շարունակել է Օրջոնիկիձեի (այժմ՝ Վլադիկավկազ) պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո, աշխատանքային առաջին մկրտությունն ստացել է հարեւան Ախալքալաքիի շրջանի Գումբուրդո գյուղի դպրոցում, նշանակվել է պատմության դասատու: Այնուհետեւ մանկավարժի իր գործունեությունը շարունակել է մեր շրջանի Օրոջալար, Մեծ Խանչալիի համայնքների դպրոցներում, ապա՝ հայրենի գյուղի՝ Խոջաբեկի նորաստեղծ կրթօջախում, որն այժմ անվանակոչում ենք Նինոծմինդա քաղաքի թիվ 3 հանրային դպրոց: Այստեղ էլ վստահվել է դպրոցի ուսմասվարի, ապա՝ տնօրենի դժվարին ու պատասխանատու պարտականությունները:

Ահա այսպես Սամվել Փութուլյանի մանկավարժական գործունեությունը ձգվել է 55 երկար ու ձիգ տարիներ: Այդ տարիներն էլ նրան վաստակ ու հեղինակություն են բերել՝ շնորհիվ իր նվիրված ու անձնուրաց աշխատանքի:

Սամվել Փութուլյանի տասնյակ ու հարյուրավոր սաները, ոտք դնելով կյանքի ճանապարհ, դարձել են անվանի մարդիկ՝ մտավորականներ, բժիշկներ, ինժեներներ, գիտնականներ, մանկավարժներ, ժողովրդական տնտեսության տարբեր մասնագետներ:

Մանկավարժի աշխատանքին զուգընթաց, Սամվել Փութուլյանը գործուն մասնակցություն է ցուցաբերել կրթօջախի հասարակական աշխատանքներին, կատարել տնօրինության շատ ու շատ հանձնարարություններ: Ս. Փութուլյանը կյանքի վերջին տարիներին աշխատել է նաեւ «Ռաֆայել Ջավախ» կրթամշակութային կենտրոնում եւ վայելել կոլեկտիվի ու սաների բացառիկ հարգանքը:

Նա ընտանիքի հոգատար հայր էր, նվիրված ամուսին, հարգված մասնագետ: Չնայած վերջին երկու տարում նա անցել էր կենսաթոշակի, բայց սերտ կապի մեջ էր դպրոցի հետ:

Գնաս բարով, հարգարժան ուսուցիչ: Հանգչիր խաղաղությամբ: Քո լուսավոր հիշատակը երկար կմնա հարազատներիդ, քեզ ճանաչող բոլոր ընկերների սրտերում:

Ք.Նինոծմինդայի թիվ 3 դպրոցի աշխատակազմ

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Կոճղից բուսած ճյուղ, շառավիղ: 9.«Լալկան» ծառ: 10.Տակնուվրա եղած: 11.Քաղաք Ուկրաինայում: 13.Արեւելյան Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք ... Առաջին (XVIII դար): 16.Ֆուտբոլ, գնդակը դրսում: 17.Պատմական աշխարհագրական նահանգ ժամանակակից Թուրքիայում, պատմական Մեսխեթիի մաս ... Կլարջեթի: 19.Տխմար, անհիմաստ: 22.Հոյակապ, լավ: 24.XX դարի ամենահայտնի ամերիկացի երգիչներից էլվիս ...: 25.Քաղաք Սիրիայում: 27.Կահ-...: 29.Քիմիական տարր: 32.Ոտքերի վրա ծանրորեն նստած՝ հենված: 33.Պատմա-աշխարհագրական շրջան Բալկանների արեւելքում: 35.ՀՀ ազգային հերոս ... Մանուկյան: 37.Երեւանցու դիմելաձեւ: 39.Հայտնի օպերային թատրոն Միլանում «Լա-...»: 40.Վերք (ժող.): 43.Վաշ-...: 44.Ռուսական էստրադային խումբ «Ռուկի ...»: 47.Պարարտ, չաղ: 49.Ֆրանսահայ նկարիչ, ֆիգուրատիվ արվեստի վարպետ Ժան ...: 50.Առանց եփելու: 53.Սեղանի խաղ: 54.Ընտանի անասուններ պահելու շենք: 55.Թերեւս: 57.Լիբերիայի նախկին նախագահ, Ջորջ ...: 58.Առանց աթոռի:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ընդմիջում: 2.Վրացական ծագումով խորհրդային բանաստեղծ եւ երաժիշտ ... Օկուջավա: 3.Նյութափոխանակության խախտման հետեւանքով առաջացող հիվանդություն: 4.…-հռոմեական ըմբշամարտ: 5.Մետաղալարից հյուսված ցանցավոր զրահաշապիկ: 6.Պետության գլխավոր երգը: 8.Խցան: 12.Մուլտֆիլմ: 14.Երգչուհի ... Եսայան: 15.Արյունածուծ միջատ: 18.Վազքի տեսակ: 19.Հին ռուսական երկարության չափման միավոր: 20.Խորհրդային մաթեմատիկոս ... Կելդիշ: 21.Հանքային կամ օրգանական նյութերից առաջացած կպչուն նստվածք ջրերի հատակին կամ ճահիճներում: 23.Անշուշտ: 26.Հայկական ֆուտբոլային ակումբ: 28.Գետ հարավ-արեւմտյան Ֆինլանդիայում: 29.Փիլիսոփա հնագույն Չինաստանում ... Ցզի: 30.Մարմնի մաս: 31.Սնունդ: 34.Սարք, գործիք: 36.Կշիռ, ծանրություն: 38.Հին հայկական տոմարի IV ամիսը: 41.Ջրախողովակ, ջրանցույց: 42.Ամերիկյան թռչուն: 45.Ռուս քիմիկոս-օրգանիկ ... Վագներ: 46.Միմյանցից նեղացած: 48.Ֆրանսիացի գեղանկարիչ, քանդակագործ էդգար ...: 51.Ծանրության ռուսական չափ: 52.Արարատ, Ղազբեգի, Էվերեստ: 56.Մեսրոպյան այբուբենի տառ:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Արագվի: 4.Գոշավանք: 10.Հուրոն: 11.Տմարդի: 12.Սողանք: 13.Պատեհ: 14.Ավո: 16.Անարի: 17.Նոթ: 18.Նա: 19.Սրինգ: 22.Կի: 24.Բույն: 27.Ալլա: 29.Սահարա: 31.Ապա: 33.Այլ: 34.Նազանի: 35.Ելենա: 36.Ունեզուրկ: 38.Կտոր: 40.Ասադ: 44.Նաթան: 46.Անդրեյ: 50.Արինա: 51.Մերուն: 53.Նու: 54.Կատու: 55.Երանի: 56.Դսեղ: 58.Սեզամ: 60.Արիզոնա: 61.Կրեմլ: 62.Ակոս:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Արտաշես: 2.Ալազանի: 3.Վուդրո: 4.Գուսան: 5.Որոտան: 6.Շողեր: 8.Անքուն: 9.Քլինքոն: 13.Պասկալ: 15.Վանա: 20.Ռոպե: 21.Գլան: 23.Կանեփ: 24.Բազուկ: 25.Ուրարտու: 26.Յանկո: 28.Լյարդ: 30.Հազ: 32.Ալմաթի: 36.Ուրան: 37.Վանանդ: 39.Ռաֆֆի: 41.Սան: 42.Անակ: 43.Թերեզա: 45.Արուս: 46.Աստղիկ: 47.Դմ: 48.Ռե: 49.Յուրա: 52.Նամակ: 57.Եթե: 58.Սոս: 59.Են: 60.Ալ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈՒՍԻՍ ՄՈՆԱՅԱՐՄՈՒ: ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱԹՈՆԵԼԻՆ ՓՈՂՈՑ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆ»
ԹԲԻԼԻՍԻ, ՎՐԱՍՏԱՆ
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445